

է Ս. Գերեզմանին մօտի մէկ սիւնին վրայ, անոր մասին կը պատմուի հետեւեալ հրաշքը. սարակինոս մը կը մտնէ Ս. Գերեզմանի եկեղեցին և իր շուրջը կը տեսնէ անաւոր պատկեր մը, որ նկարուած է սիւնին վրայ: Երբ ան պատկերին աչքերը դուրս կը խէ, ուղղակի իր աչքերը դուրս կ'իջնան հողին վրայ» (P. T. S. VI, էջ 8):

13. — Քրիստոսի գլխուն քանդակը Ս. Գերեզմանին մէջ (Ը. Գար). — Նիկոզիմոս՝ Լիւքի (Lucques) (Իտալիա) ժողովրդեան աւանդութեան համաձայն, Ս. Գերեզմանին մէջ թաղուած մեր փրկչին զուլսը կը քանդակէ, եւ անոր այս գործը գրեթէ Ը. դարէն ի վեր պահպանուած ըլլալով՝ Լիւքի Ս. պատկեր (S. vout de Lucques) անունը առած է, եւ շատ կը յարգուէր Միջին Դարուն և երդումով վկայ կը բռնէին զայն: Քայց Միջին Դարը՝ խաբուելով համանունութենէ՝ Լիւքի պատկերը նկատած է Պօղոսի ընկեր Ղուկասի (Luc) գործը: Յովհաննէս Դամասկացին ալ՝ Ղուկասը կ'ընդունի իբր պաշտպան նկարիչներու, ինչպէս նաեւ բժիշկներու(*) (R. D. M. 1863, էջ 862-63):

Լատինք կը կարծեն թէ Ռամէլէի իրենց մատուռը Յովսէփ Արիմաթացիին տան տեղւոյն վրայ շինուած

(*) Ղուկասի կ'ընծայուին Ս. Կուսի քանդակի ծանօթ պատկերները, ճննարկները հեղինակ կը կարծեն ժ. դարու Լուիս անուն անձ մը, բայց ամենքն ալ մէկդի պէտք է դնել Ս. Կուսի այն պատկերին հետ՝ որ քուրթեու կողմէն՝ Նիկիոյ գրաման ժամանակ քանդակէն փախած ու ծովերէն անցնելով ապաստանած է Աթոս լեռան լիւքեու վանքին մէջ. ինչպէս նաեւ ան՝ որ 1294ին օդերէն անցնելով եկաւ ինկաւ Լարեդի (Իտալիա) բլուրին վրայ. (R. D. M. 1863, էջ 863):